

# Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր

## XII դասարան

### Պատասխաններ

1. Ակսել Բակունց երևույթը հայ գրականություն մտավ իր ծիրանի փողով՝ հնչեցնելով բոլորովին նոր երգեր ու թրթռոններ, բացելով նոր աշխարհներ ու մարդկային հին ու նոր բնավորություններ: Նա Կաքավաբերդի գլխին տարին բոլոր նստող ամպի միջով տեսավ այնտեղ ծվարած ալպիական մանուշակին, միրհավի արնակոլով թևի տակ պահեց Սոնայի թաքուն սերը, Սաքանի հիշողության մեջ դաջեց Մթնաձորի չարքի ճերմակ ատամնաշարը...

Աշխարհից մոռացված իր հայրենիքում նա նոր սերմեր ցանեց Հազրոյի ու Լառ Մարգարի հետ ու հնչեցրեց իր ծիրանի փողը, որ այսօր էլ <<Միրհավի կանչն է տանում դարերին>>: Նա Մթնաձորի թավուտ անտառներում որոնեց ու գտավ իր ժողովրդի հավերժության գաղտնիքը՝ դառնալով Մթնաձորի քուրմը, հիացավ Կյորեսի անգուգական լեզվի կարկաչով մեծ կյորեսեցին:

Բակունցն առաջինն էր, որ գրականություն բերեց մի թեմա, որ հետագայում ծնունդ պիտի տար կարոտի գրականությանը: Նա առաջինը խոսեց կորուսյալ հայրենիքի մասին, առաջինը նկատեց արտագաղթի, գյուղերի լքման ողբերգությունը, որը այն հեռավոր ժամանակներում այլ անուն ուներ: Այդպիսի գործերից է <<Հին տանը>> պատմվածքը: Ավան ամին հիմա գյուղում մենակ է ապրում. որդիները հեռացել են, մոռացել են հողն ու գյուղը, անգամ հորը չեն հիշում: Նրան հյուր է գալիս Ակսելը՝ եղբոր որդին: Ակսելը մեծ աշխարհից է եկել, իսկ ծերունին իր գործով է զբաղված. նրա կինը մահացել է, ինքը ծերացել է, և Ակսելի հարց-խոհը՝ << ո՞ւմ պիտի տաս տան բանալիները>> մնում է անպատասխան, ավելի ճիշտ՝ ճարտասանական:

Կորուսյալ հայրենիքի կարոտի կանչ է <<Ծիրանի փողը>> հուզիչ պատմվածքը: Սասունը աչքերում պահած Հազրոն գոհ է, որ փրկվել է, ջրբաշխ է, թոռնիկ ունի, <<հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհություն>>, բայց աչքերում անթափանց մշուշ է, Սասնա սարերի մշուշը, կարոտը, որ կրակե շապիկի պես այրում է նրան, <<սահման նեղ է, շնորհիվ սահմանի նեղության, ժողովուրդ կնեղվի>>: Բայց պարում է այս քարից հաց քամող ժողովուրդը, պարը խրորտ է, անպարտելի, ինչպես իրենց հավատը, իրենց ապրելու և ապրեցնելու տենչը: Հազրոն նվագում է իր ծիրանի հագարամյա փողը, հնչեցնում է կարոտի մրմունջ, հնչյունները գնում են Սասնա սարեր, մակաղած գառները անուշ մնչում են: Հազրոն այլևս իր ծննդավայրում է. <<Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու... երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր... Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բանցրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրա, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ>>: Հազրոն իր ծիրանի փողը ժառանգելու է իր քաջարժիվ թոռնիկին. ուրեմն՝ միշտ հնչելու է կարոտի արդար երգը մինչև հաղթանակ ու հայրենիքի վերագտնում: Բակունցի ծիրանի փողը <<առանց հին ահի ու նոր խնդությամբ>> հնչեցնելու է մեր <<արդար երգերը>>, ու կարոտը ժամանակների միջով հասնելու է երգիր:

Լառ Մարգարն էլ <<հեղեղի բերանն ընկած տաշեղի նման>> հայտնվել է նոր հայրենիքում, ջուր է տալիս ծարավ այգիներին արդար ու անխարդախ: Նրա գրպանում ամուր պահված են ծիրանի կորիզները, որ ծառ են դառնալու կամրջելու հիմն ու նորը: Նորից ծաղկելու է հայոց ծիրանենին՝ ի հեճուկս դավի ու սպանության, ի փառս նոր հայրենիքի:

Չարենցը՝ Բակունցին ... Եվ բառերի համար քո մարմարյա

Հնամենի, բուրյան.....

2.Սահյանը՝ Մահարուն Էջմիածնա վանքի բակում... Խեղճ ուկրակ որբերի ծով...

Սրտում հազար անուրջ ու սեր, Սիրտը լիքն է ողբ ու լացով...

Երգի տետրակ ունի ծոցում... Եվ գալիս է Չարենցը մեծ,

Բանաստեղծ է նրան օծում...

Ու մառանն է մտնում երգի Նա խանական իր կարասով..

Ու քայլում է նա հաղթական, Միտքն անհունին,

Ու ձեռքի մեջ անմահության բանալին է...

Գուրգեն Մահարին գրականություն մտավ բարդիների նուրբ խշշոցով, Չալոյի ցավալի կորստով, աշնանային մրգահասով: Եկավ Չարենցի օրհնությամբ՝ մինչև վերջ հավատարիմ մնալով բանաստեղծական անկեղծ արդարությանը: Հետո անցավ արձակին, որը թաթախված էր հեռավոր մանկության ու պատանեկության ողբերգական ու տխուր գույներով, հասունության անդառնալի ցավով ու վիրավորանքով, ապա նորից վառեց ապրելու տենչը՝ ներելով ու աղոթքով: Նրա արձակը շնչում է կենսատու հումորով, տխրությունը թաթախված է լուսավոր ու պայծառ թախիծով: Նրա հնգապատումը ունի ինքնակենսագրական նախահիմք՝ **Մանկություն, Պատանեկություն, Երիտասարդության սեմին,**

**Երիտասարդություն, Ծաղկած փշալարեր:** Առաջին երեքի ժամանակային ընդգրկումը հասնում է մինչև 1920 թվականը, Երիտասարդությունը մնաց անավարտ, իսկ **Ծաղկած փշալարերը** ընդգրկում է առաջին արքայի տարիները: Մահարին վերակենդանացնում է հանրային, ազգային, մշակութային իրադարձությունների հասարակական- քաղաքական արձագանքները, որոնք մի ամբողջ ժամանակաշրջանի տարեգրություն են: Ժողովրդին բաժին հասած դժբախտությունները դուրս են գալիս անձնականի տիրույթից՝ դառնալով համատարած, անանձնական: Մահարու ոճը մտերմիկ է, հումորային, թեթև, ամենաձանր դժբախտությունների միջից երևում է հույսի թույլ շողը: Լինելով ինքնակենսագրական- հուշապատումի ժանր՝ այն միաժամանակ տարեգրական- պատմական- ճանաչողական է: Մահարու հնգապատումը պատմության դասագիրք է, պատմական ճշմարտություն հետագա սերունդների համար: **Ծաղկած փշալարերը** միլիոնավոր մարդկանց ցավի հուշարձանն է, դատապարտված հասարակության միջնադարյան հավատաքնությունը՝ միլիոնավոր գործող անձանցով:

3.Գեղամ Սարյանը հայ գրականության ամենանուրբ քնարերգուներից է, մարդկային հոգեբանության խորագգաց հոգիներից: Նրա **Մարտիկի երգը** անգուգական բանաստեղծություն- երգը այժմ էլ ամենաշքեղն է, ամենաերգվողը , ամենաարդիականը: Բարդիների խշշոցով ու աղբյուրների լացով են բաժանվում սիրած աղջիկն ու տղան՝ իրենց հետ տանելով ընթերցողի ափսոսանքը և ցավը: Խոհափիլիսոփայական հրաշալի խոհեր են **Քրիզանթեմ** և **Մխախտո** բանաստեղծությունները:

**Քրիզանթեմ** բանաստեղծությունը անկեղծ ու տխուր գրույց է տարիքն առած բանաստեղծի ու աշնան վերջին ծաղկի միջև: Սոստեցել է բանաստեղծի աշունը. քրիզանթեմի նուրբ թերթիկների մեջ նա տեսնում է իր ալեգարդ մազերը, իր ապրած կյանքը: Շուտով ձմեռ է գալու, ծաղիկը բացվել է ձմռան նախաշեմին, և ձյունը շուտով ծածկելու է երկուսին էլ, ձմռան ճերմակ ճանապարհը անցնելու են երկուսով՝ ձյան փաթիլները թափվելու են վերհուշի տեսքով: Տխրում է բանաստեղծը, որ չի կարող սիրով ողջունել աշնան վերջին հառաչը բերող ճերմակ ծաղկին և մի տեսակ լուռ համակերպումով ընդառաջ է գնում իր ճանփին կանգնած տխրությանը՝ ճերմակ, մաքուր ու բազմաթերթ ծաղկին՝ իր ապրած կյանքի վերջին հառաչին:

4.Լիտվացի մեծ բանաստեղծ Էդուարդաս Մեժելայտիսը Սևակին անվանել է«քնարական մտածող», միանգամայն ճշմարիտ գնահատական: Սևակի սիրերգությունը ,հիրավի, տարբերվում է իր քնարական մտածողությամբ, իր պատկերների անկրկնելի թռիչքներով, իր մտքի անսպասելի գյուտերով: Դեռևս պատանեկան հասակում գրած նրա «Անմոռուկներ մանկությունից» և «Պատանության ծաղիկներ» շարքերի բանաստեղծությունները մեզ տանում են մի մաքուր ու երազային աշխարհ՝ «սիրում էի ձեր տան բակում խաղալ«տուն-տուն», միայն քեզ հե՛ տ, քեզ հե՛ տ խաղալ», կամ «Ախ ես գիտեմ, չէիր սիրում, Հիմագիտեմ ես անկասկած, Վազվզում ենք մենք սեզերում, Խոտերի մեջ խոնավ ու թաց: Հետո նստում ուրախ ու գոհ, Երեքնուկի թուփ ենք քաղում Եվ այդ ծանոթ երեքնուկով Սիրեմ- սիրեմ անվերջ խաղում...» . մանկական անմեղ «մեղավոր» մի ամբողջ աշխարհ է բացվում ու

վերակենդանանում մեր առջև, և մենք ապրում ենք ծանր խոստովանանքի շշուռը.«Չէիր, չէիր, չէիր սիրում, Թե չէ ինչ է, Բարդ էր այդքան գտնել երեք անուններում, իմ անունը գեթ մեկ անգամ»: Իսկ մենք նրա սիրերգության ցանկացած տողում ենք գտնում իր անունը, երբ ավստասանքով արձանագրվում է անխուսափելին.«Առաջին սերը, ինչպես և հացը, ինչ էլ որ անես, միշտ կուտ է գնում»: Սևակը երբեք չի ամաչել իր բազմակերպ սիրո համար, որովհետև սիրո նույն ճանապարհով ու նույն հասցեով վերադարձել է իր նախասկզբին՝ «նորից չեն սիրում, սիրում են կրկին»: Առաջին սիրո կորստյան ցավը մերթ-մերթ դառնում է հիասթափություն ու ավստասանք՝ «Անկեղծ ասած». «Դու բնավ էլ այն չես եղել, ինչ որ ես եմ կարծել երկար». արդեն կա նոր սեր, բայց հին սիրո հեքիաթը դեռ չի վերջացել, որովհետև հեքիաթներին չհավատալով հանդերձ, հյուսվում է նորը՝ սպասելով սիրո իրենց եղանակին՝ «Նամակ»: Սևակի մեծագույն սերը՝ անփոխարինելին, առասպելական գեղեցիկը՝ Սուլամիթան, գրում է. «Արդյոք ե՞րբ ես քեզ կտեսնեմ: Չմեռ ու ամառ, գարուն և աշուն...Իսկ որտեղ է տարվա հինգերորդ եղանակը: Շատ կարևորը, մեր եղանակը»: Շուտով ծնվում է նամակի գրեթե անփոփոխ արձագանքը.

Նա՞ է գրում ինձ, Թե ես եմ գրում իմ հարազատին,- Ինքս էլ չգիտեմ  
«Արդյոք քեզ երբ եմ, երբ եմ տեսնելու... Չմեռ ու ամառ, Աշուն ու գարուն...  
Իսկ ուր է տարվա մեր եղանակը, Այն հինգերորդը...»

Սուլամիթա Ռուդնիկին է նվիրված նաև «Երգ երգոց» պոեմը.սիրո փառաբանության առավել գեղեցիկ երկ դժվար է պատկերացնել.Սուլամիթան իրական հերոսուհի է, ինչպես իր անվանակիցը՝ աստվածաշնչյան Սողոմոնի «Երգ երգոցի» հերոսուհին: Նրանց սերը ծաղկել է Մոսկվայում և վերածվել մտերմության, անփոխարինելի ընկերության, անբեկանելի նվիրումի, որն ստացել է այսպիսի ձևակերպում.«Նա կա և չկա՝ ինչպես երկինքը, իմն է- իմը չէ՝ ինչպես և ինքը». այս պոեմը իրական սիրո գովերգումն է՝ հանդիպման, հիացման, տառապանքի , վայելքի ու կարոտի ելևէջումներով՝**Գեղեցիկ ես դու, ինչպես բոլորը, որոնց սիրում են...Եվ կախարդիչ ես, ինչպես բոլորը, որոնց չեն տիրել...**

Նույն ապրումներն են «Ուշացած իմ սեր պոեմում». երբեք չուշացող սերը գալիս է անակնկալ, որովհետև« նորից չեն սիրում, սիրում են կրկին», յուրաքանչյուր նոր սեր ունի իր օրենքները, որոնք կրկնվում են ապրումների բազմազանությամբ՝ հաստատելով տերյանական բանաձևումը՝ Ես իմ սերն եմ սիրում: Ուշացած սերը տառապանք է. գալիս է ամուսնությունից հետո, տակնուվրա անում ամեն ինչ, խարխլում ընտանիքի հիմքերը, և հերոսը կանգնում է«պարտականության ու սիրո միջև»:

Սիրո դրսևորման անգուգական գոհար է«Ես ասում եմ քո անունը».փշատենու փշի նման լեզվի մեջ խրված անունը զայրացնում է...սիրով այնքան, որ ծնվելիք աղջիկը պիտի կոչվի հենց ա՛յդ անունով, որովհետև«Դու՝ երկու տառ»...բայց այդ հասարակ դերանունով բանաստեղծը աշխարհի տերն է և որոնում է մի լեզու աշխարհում,«որ չունենա իր մեջ այս անջատվել բայը», իսկ այդպիսի լեզու չկա, ու բանաստեղծը դարձյալ ապավինում է սիրո

լեզվին: Եվ նահանջում է երգով...դեպի սկիզբ, բայց այլևս այն սկիզբը չէ, այն անմեղ հիացումը, այն գլխապտույտը, տառապանքի և կորստյան ցավ է, մի ամբողջ կենսագրություն, որ ավարտվում է...սիրով:

## **Պնահատման չափանիշներ**

1-ին հարց

Ենթահարցեր՝ 1 - 1 միավոր, յուրաքանչյուր ստեղծագործության համար՝ 1 միավոր,  
3 - 1 միավոր

2-րդ հարց

Ենթահարցեր՝ 1 - 0,5-ական միավոր, 5 – 2 միավոր, 6 - 1 միավոր

3-րդ հարց - 5 միավոր

4-րդ հարց

Ենթահարցեր՝ 1 - 1 միավոր, յուրաքանչյուր ստեղծագործություն՝ 1 միավոր:

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**